№ 82 Մայիսի 30 (Յունիսի 11) 1879 Մայիսի 30 (Յունիսի 11) № 82

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վկայաթղթերի հարցը—Ներքին տեսութիւն։ Նամակ Վ. Ագուլիսից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ «Մասիսի» թղթակցութիւնը։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՎԿԱՅԱԹՂԹԵՐԻ ՀԱՐՑԸ

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի մշակների, զանազան հիմնարկութիւնների մէջ բանւորների և տան ծառաների մեծ մասը օտարաքաղաքացի են։ Նրանք միշտ ապրել են Թիֆլիսում առանց որ և է վկայաթուղթ ունենալու։

Այժմ մեր պօլիցիան սկսել է ամենքից պահանջել վկայաթղթեր։ Շատերը այդ տեսակ թղթեր չունենալով, կալանաւորվում են, բանտարկվում են և աքսորվում են քաղաքից։ Ասում են որ մօտ օրերումն աւելի քան 1000 մարդ աքսորվեցաւ Թիֆլիսից։

Այդպիսով տան տէրերը մնում են առանց ծառաների, հիմնարկութիւնները, արհեստանոցները, գործարանները, տպարանները զրկվում են իրանց բանւորներից։

Մենք չենք կարող չը համակրել պօլիցիայի այդ տեսակ կարգադրութեան, որովհետև դորանով կարգ և կանոն կը մտցնվի քաղաքում, բայց ուրիշ կողմից ցանկալի կը լինէր որ այդ կարգադրութիւնը այդքան խստութեամբ և այդքան շտապով չը կատարվէր, այլ փոքր առ փոքր, այնպէս որ մի յայտնի միջոց տրվէր բանւորներին և ծառաներին իրանց ծննդեան տեղի վարչութենից ստանալ օրինաւոր վկայաթղթեր։

Եթէ ոչ, կարելի է երկիւղ ունենալ որ Թիֆլիսը յանկարծ կը զրկվի իր աշխատող ամենալաւ ոյժերից, աշխատանքը շատ տեղ կը դադարի, շատ տեղը տէրերը կը մնան առանց պարապմունքի, անգործները կը լցվեն գաւառներում, իսկ Թիֆլիսում աշխատող ձեռքերը սաստիկ կը թանգանան։

Մենք հասկանում ենք վկայաթուղթ չունեցող պարապ մարդիկներին, անգործներին, որոշ պարապմունք չունեցողներին աքսորել քաղաքից,—բայց նրանցից, որոնք թէև վկայաթուղթ չունեն, բայց որոշ պարապմունք ունեն, կարելի էր մի յայտնի տուգանք պահանջել, այնու ամենայնիւ թողնելով նրանց իրանց պարապմունքի մէջ, խստութեամբ պահանջելով, որ մի յայտնի ժամանակամիջոցում (նայելով թէ որքան հեռու է մայրենի գիւղը կամ քաղաքը) անպատճառ ճարեն իրանց համար օրինական վկայաթղթեր իրանց ծննդեան տեղերից։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Վ.-ԱԳՈՒԼԻՍԻՑ

15 մայիսի

Այսօր, մայիսի 15-ին, կատարվեցաւ կոպիտ գազանական ոյժի յաղթութիւնը բարոյական ոյժի դէմ։

Հաւաքված էր ընդհանուր ժողով, որտեղ պէտք է քննվէր Ագուլիսի դպրոցների բարեկարգութեան համար կազմված մասնաժողովի երկու ամսվայ գործունէութիւնը։ Մեզ, օտարերկրեայ ուսուցիչներիս, աւելի հետաքրքրում էր ներկայ գտնվել ընդհանուր ժողովին, որովհետև մեզանից ամեն մէկը խօսելիք ունէր, բացի դորանից, մեր ընկեր պ. Մելիք-Յակոբեանը պատրաստել էր մի ընդարձակ գրուածք դպրոցների դրութեան և նրանց աննախանձելի վիճակի մասին, որ կամենում էր կարդալ ժողովի մէջ։ Կար և մի ուրիշ բան. մեր հակառակորդ տեղացի վարժապետներին հրաւիրել էին, մտածեցինք, ինչու մենք էլ այնտեղ չը պիտի գտնվենք։ Այս մտքով մենք, պանդուխտ ուսուցիչներս,—ես, պ. Մելիք-Յակոբեանը, կրօնուսոյց Տէր-Մեսրոպ քահանան և պ. Ն. Զիգիանեանցը, չորս հոգի,—գնացինք օրիորդաց ուսումնարանը, որի դահլիճում հաւաքված էր ընդհանուր ժողովը։

Բայց մենք չը մտածեցինք, որ մեր ներկայանալը չէր կարող հաճելի լինել մասնաժողովի անդամներին. որոնք այնտեղ հաշիւ պիտի տային, մենք չը մտածեցինք, որ պ. Մելիք-Յակոբեանի պատրաստած ճառը իր հայեացքներով պէտք է բոլորովին հակառակէր մասնաժողովի խորամանկ նպատակներին։ Վերջապէս չը մտածեցինք և գնացինք։

Ես չեմ կամենում զանց առնել մի քանի ձանձրալի մանրամասնութիւններ, այն պատճառաւ միայն, որ ցոյց տամ թէ որպէս են կազմվում և վերջանում գիւղական ժողովները, այն ևս Ագուլիսում, որի ժողովուրդը պարծենում է իր զարգացումով։

Ասեցի, մասնաժողովի անդամները պէտք է հաշիւ տային իրանց գործունէութեան մասին ընդհանուր ժողովին։ Բայց նոյն իսկ այդ ընդհանուր ժողովի գումարման մէջ կար մի խարդախութիւն։

Մասնաժողովի ինքնակոչ նախագահը, պ. Մ. Տէր-Մկրտչեանը, ագուլեցիների այդ նշանաւոր «աղան» (!!) սկզբից ցուցակ է առաջարկում տանուտէրին, որ կանչէ այս և այն մարդուն։ Ի հարկէ, նա ընտրել էր այն մարդիկը, որ իրան պէտք էին... Մեզ, օտարերկրեայ ուսուցիչներիս, ցուցակից դուրս էին գցել։ Բայց մենք գնացինք։ Մեր ներս մտնելը մի առանձին վրդովմունքի մէջ ձգեց մասնաժողովի անդամներին, կարծես թէ, նրանց գլխին սառը ջուր ածեցին։ Սկսեցին միմեանց երեսին նայել, կամ ականջներին փթփթալ։ Այս տևեց կէս ժամ խորին լռութեան հետ։ Յայտնվեցան հանդիսականներից ոմանք, որ ձայն տուեցին, թէ ժողովը ինչու չէ սկսում իր գործը, ումն են սպասում։ Դարձեալ պատասխան չեղաւ։

Նոյն միջոցին պ. Տէր-Մկրտչեանի թելադրութեամբ մի մարդ, մօտեցաւ տանուտէր պ. Կոստանդինեանցին, և նրան նշանացի անելով դուրս կանչեց։ Տանուտէրին յայտնել էին, թէ ժողովը չէ սկսում իր գործը, դա այն պատճառով է, որ ուսուցիչները ներկայ են։ Պարոն տանուտէրը նրան պատասխանել էր, թէ դա ընդհանուր ժողով է, և ամեն մարդ իրաւունք ունի ներս մտնելու, և մանաւանդ ուսուցիչները։ Ի հարկէ, այս բոլորը, թէև լռութեամբ և մրմնջիւններով էր կատարվում, բայց չէր կարող չը նկատվել հանդիսականներին, որոնք անհամբերութեամբ պահանջում էին, որ նիստը սկսվի։ Անցաւ քառորդ ժամ ևս, բայց մասնաժողովի անդամները չէին կամենում սկսել կարդալ իրանց պատրաստած գործը։

Այն ժամանակ պ. Մելիք-Յակոբեանը ոտքի կանգնեց և ուսուցիչների կողմից յայտնեց, թէ երևում է, մասնաժողովի պատուելի անդամները չեն ցանկանում կարդալ իրանց պատրաստած գործը, գուցէ մեր, ուսուցիչներիս, ներկայ գտնվելն է պատճառ, բայց ես իմ և իմ ընկերների կողմից յայտնում եմ, որ մենք եկել ենք այստեղ միայն լսելու և ոչ քննադատելու մասնաժողովի գործունէութիւնը, բայց,—աւելացրուց նա—եթէ թոյլ կը տրվի, մեզանից ամեն մէկը գուցէ մի խօսելիք ունէր յայտնելու ընդհանուր ժողովին։ Ժողովի ինքնակոչ նախագահ (ով նշանակեց նրան) պ. Մ. Տէր-Մկրտչեանցը պատասխանեց՝ որովհետև այստեղ գլխաւորապէս խօսք է լինելու և ուսուցիչների վրա, այս պատճառով չենք ցանկանում, որ նրանք ներկայ գտնվեն։ Պ. Մելիք-Յակոբեանը ա՛սաց. «Այդ իսկ պատճառով, որ դուք պիտի խօսէք ուսուցիչների վրա, ուսուցիչներն էլ իրաւունք են համարում լսել և իրանց արդարացնել, եթէ դուք կը յայտնէիք նրանց մասին մի սխալ տեղեկութիւն։» Սկսվեց տաք վիճաբանութիւն երկուսի մէջ։

Փակագծի մէջ ասում եմ, որ բացի պ. Մելիք-Յակոբեանից, մեր երեք ուսուցիչներիս մասին պ. Տէր-Մկրտչեանցը պատրաստել էր մի ամբողջ ամբաստանութիւն, և կային ոմանք որ պիտի խօսէին մեզ վրա զանազան զրպարտութիւններ։

Երկար վիճելուց յետոյ, պ. Մելիք-Յակոբեանը իր միտքը աւելի բացատրելու համար ասաց պ. Տէր-Մկրտչեանցին, թէ բոլոր օրէնքները թոյլ են տալիս, որ դատախազը և ամբաստանեալը երես առ երես կանգնած լինեն ատենի առջև, եթէ դուք մի մեղադրանք ունէք իմ ընկերների մասին խօսելու, նրանց էլ պէտք է իրաւունք տրվի պաշտպանվելու։ Եւ աւելացրուց, թէ աւազակին անգամ թոյլ են տալիս պաշտպանելու իր արդարութիւնը։ Վերջին խօսքերը հէնց որ լսեց պ. Տէր Մկրտչեանցը, դարձաւ դէպի հանդիսականները և կայծակի նման ասաց.—Տեսնք, ինչ հայհոյութիւն արեց, ձեզ բոլորիդ աւազակ կոչեց։

Պարոնը կամ չը հասկացաւ, կամ խարդախութեամբ կամեցաւ ժողովրդին գրգռել։ (Բայց պէտք չէ մոռանալ, որ նա ուսանող է եղել, համալսարան է մտել....)։ Ոմանք ծիծաղեցին, ոմանք նրան նկատեցին, թէ պ. Մելիք-Յակոբեանը մեզ չը հայհոյեց, միայն օրինակ բերեց։

Այնքան բազմութեան մէջ երկու մարդ չը գտնվեցաւ, որ համարձակվէր բերանը բաց անել, և պ. Տէր-Մկրտչեանցի բռնաւորութեանը չափ դնել, որովհետև Ագուլիսի երևելի աղաներից մէկն է համարվում, որովհետև նա.... և այլն։ Մի ազնիւ մարդ միայն, պ. Բ. Տէր-Միքայէլեանը, որ նոյնպէս մասնաժողովի անդամներից մէկն էր, մեր իրաւունքներին պաշտպան հանդիսացաւ։ Նա ոտք կանգնեց և խօսեց հետևեալը. թէ բոլորովին անիրաւացի է արգելել ուսուցիչներին, որ այս ժողովի մէջ ներկայ չը գտնվեն, որովհետև գործը վերաբերվում է դպրոցներին, որոնց մէջ նրանք պաշտօն են վարում, որոնց դրութիւնը և պատահած անցքերի հանգամանքները նրանց աւելի ծանօթ են։ Բացի դրանից աւելացրուց նա, մասնաժողովի անդամները իրանց գործը թագցնելով ուսուցիչներից, և երկիւղ կրելով նրանց ներկայութենից, դրանով աւելի և աւելի կասկածելի են շինում իրանց վճիռները ընդհանուր ժողովի առջև, և դրանով ցոյց են տալիս, որ իրանք արդար չեն վարվել որ իրանք վախենում են, մի գուցէ ուսուցիչները մերկացնէին մի քանի կատարված խարդախութիւններ....

Ես աւելորդ եմ համարում պ. Տէր-Միքայէլեանի ասած բոլոր իրաւացի խօսքերը մէջ բերել, միայն այսքանը կասեմ, որ նա պ. Տէր-Մկրտչեանցին բոլորովին լռեցրուց, և նա պատասխանելու խօսք չը գտնելով, անպատիւ կերպով ժողովից դուրս եկաւ։ Նրանից յետոյ դուրս եկաւ և պ. Տէր-Միքայէլեանը։ Երբ այս երկու առաջաւոր մարդիկը հեռացան, ժողովը քանդվեցաւ։

Բայց դրսում, այսինքն օրիորդաց դպրոցի բակումը, կատարվեցաւ մի սարսափելի դրամա, որի մէջ ագուլեցիք ցոյց տուեցին իրանց հրէշական բնաւորութիւնը։

Մենք, ուսուցիչներս, յետոյ դուրս եկանք ժողովից, բայց չէինք կարծում, որ պ. Տէր-Մկրտչեանը պատշգամբի վրա կանգնած սպասում է մեզ։ Երբ մօտեցանք նրան, առանց որ և իցէ պատճառ տալու, նա յարձակվեցաւ պ. Մելիք-Յակոբեանի դէմ և սկսեց հայհոյանքներ արձակել։ Ի հարկէ վերջինս էլ պատասխանեց նրան նոյն կարգով։ Յետոյ պ. Տէր-Մկրտչեանի հայհոյանքներին ձայնակից եղան նրա փեսայ Շահնազարեանցը, նրա հօրեղբօր որդի Սաչան, նրանց ծառայի որդի Թ. Փանեանցը (որ տեղացի ուսուցիչներից մէկն է)։ Եւ խռովութիւնը այն աստիճան հասաւ, որ եթէ պ. Մելիք-Յակոբեանը իր ձեռքի անագին փայտով չը սպառնար պ. Տէր-Մկրտչեանցին, գուցէ կռիւը ուրիշ կերպարանք կը ստանար։ Բայց մի մոռացիր, ընթերցող, որ այս կռւի հերոսները բոլորն մասնաժողովի անդամներ էին, որ ընտրված էին Ագուլիսի դպրոցները բարեկարգելու.... Ողորմելի ժողովուրդ, ինչ տեսակ մարդիկների են հաւատում իրանց զաւակների կրթութեան գործը։

Կ. Տէր-Խաչատուրեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Նոր-Նախիջևան, 20 մայիսի

Սրանից համարեա մի ամիս յառաջ մի բաւական համբաւաւոր հայ ուսուցիչ վերջացրեց իր դառն կեանքը մի շատ արտասուելի դրութեան մէջ. սրա համար ասում էին ոմանք լինել Վաղարշապատեցի և ոմանք Երևանցի։ Հանգուցեալը ամուսնացած էր և վարած իր պաշտօնը քաղաքիս մէջ 18 տարիներից աւելի. Թողել է իր կինը և երեք փոքրահասակ զաւակունք ։ Իմ դիտաւորութիւնը չը լինելով այս անձի կենսագրութիւնը անել, այսքանը միայն յայտնեմ, որ հանգուցեալի գրքերի և գրութիւնների միջից գտնված է, մի բանաստեղծական աշխատութիւն, կրելով վերնագիր «Հայկազեան Վահագն»։

Հանգուցեալի կինը ցանկալով այս աշխատութեան տպագրութեամբ վաճառելը, իբր մի փոքրիկ դրամական օժանդակութիւն իւր անտուն և անտէր զաւակաց, դիմում է իր ծանօթներին, բայց ամենքեան մերժում են, մինչև ամենահարուստներին անգամ, որոնք մինչև անգամ բնագիրն գնել չեն կամենում։ Ճարահատեալ այրի կինը դիմում է ինձ աղաչելով մի հնար գտնել այս մասին. ուստի և ես իբր միակ և ամենաապահով միջոց համարձակվում եմ դիմել ձեզ խնդրելով հրատարակել այս լուրը։ Ցաւալի է, որ Թիֆլիսում, մի այդպիսի բազմահայ քաղաքում, գտնվէր մինը, որ ցանկանար տալ տպագրել այս աշխատութիւնը իր անելի պայմաններով կամ, գնէր բնագիրը։ Եթէ ամբողջ գործը տեսնել և կարդալ ցանկացող գտնվի, որպէս բնական է, կարող եմ ուղարկել յանուն ձեր խմբագրութեանը։ Ամբողջ աշխատութիւնը կարելի է տպել 8—9 տպագրութեան թերթերի վրա։

Ե. Ս. Պէզճեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 25 մայիսի

Մայիսի 20-ին տեղի ունեցած գիմնազիստների խայտառակ ներկայացման առիթով, մի քանի անձինքներից լսեցի, որ իմ պաշտելի բարեկամներս ձայն են տարածած, որ իբրև թէ ես եմ հաւաքել նորանց և յորդորել ներկայացումն տալու։ Ինձ սաստիկ զարմացնելով և, միանգամայն, վիրաւորելով այդ անտեղի և անիրաւ լուրի տարածումն, հարկ եմ համարում յայտնել, որ ես ոչ մտադրութիւն ունեցել եմ և ոչ ունենալու ցանկութիւն ունեմ այդպիսի ինձ համար շատ անախորժ գործերի մէջ մտնել և ինքս անհաշտ թշնամի եմ այս կանոնին չը հետևողներին։ Ես այդ երիտասարդ գիմնազիստների թախանձանքին մարդասիրաբար զիջանելով, ներկայացման իսկ օրը խոստացայ կարդալ «Վէրք Հայաստանից» մի ոտանաւոր, որոյ բարեխղճաբար կատարման համար ժողովուրդը վարձատրեց անընդհատ ծափահարութիւններով։ Խոնարհաբար խնդրում եմ այս մի քանի տող գրութեանս ամբողջութեամբ տեղ տալ ձեր լրագրի մէջ։

Պօղոս Քաթանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Գրաշարների հիւանդութեան պատճառով, այսօր, մայիսի 30-ին, կէս թերթ միայն կարողացանք հրատարակել։

—

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք. «Օրերումս անցաւ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՎ, դէպի Ուրալ Բեռլինի համալսարանի պրոֆէսոր դօկտոր Անդրէաս Արծրունի։ Նա հրաւիրված է մեր միներալօգիական ընկերութեան կողմից Ուրալ սարերի արևմտեան զառիվայրի պահեստների քարտէզը կազմելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

—

Ես կը մտածեմ թէ այս գիւղացւոց կեանքին մէջ արմատական փոփոխութիւն մտցունել հարկ է. մինչև անգամ իւրեանց կերակուրներն հարկ է փոխել։ Ես բժիշկ չեմ, բայց հարկ ալ չէ բժիշկ լինել. այս շատ պարզ բան է թէ սնունդը մեծ ազդեցութիւն ունի ո և է անձի կենաց վրայ. կան սնունդներ որ զուարթ և առոյգ բնաւորութիւն կը տան, կան ալ որ թոյլ և ծանրաշարժ կանեն։ Ամեն բանի մէջ չափաւորն է օգտակար և ընդունելի. չարքաշութիւնը ծայրայեղ վիճակի հասած է այստեղ։ Թէ մի Եւրոպացի ստիպուէր այս Սախացիների նման կեանք վարել, ատրճանակն կը պարպէր իւր բերանի մէջ, լաւագոյն համարելով մահն քան թէ մի այսպիսի կեանք։ Բայց գիտէ՞ք թէ որչափ գիւղացիներ բնականապէս կը մեռնին վատ սնունդի, աղքատ և թշուառ կենաց հետևութիւններով և ոչ ոք բնաւ ուշ չը դարձուներ այդ կէտի վրայ։ Միայն շատ առողջ կազմուած ունեցողներն են կը տոկան և չեն մեռնիր, դոքա ևս անշուշտ աւելի զօրաւոր կը լինէին, եթէ լաւ սնունդ ստանային։ Մեծ պահքի վերջերն էր որ Դատուան գացի, անցնելով Հայոց Ձորէն (Խաւու Ձոր), Գաւաշէն Կարճկանէն և Գաւառէն։ Այս վերջին տեղեր անցած գիւղերս ուզելով կամ ստիպուելով գիւղացւոց նման պահք պահել, ուրիշ բան չէինք ունենար ուտելիք, բայց միայն «ցամաք հաց»։ Աւելորդ է ասել թէ այդ գիւղացւոց կերածն Կ. Պօլսոյ մէջ ծախուածին նման յստակ հաց չէ. հազար և մի տեսակ բաներ կան ցորենին մէջ, լաւ մաքրուած չէ։ Գիւղացւոց սովորական ուտելիքն է մածուն, պանիր, հաւկիթ. և երբ պահքի պատճառով չեն կարող այդ բաներ ուտել, ի՞նչ կը մնայ ուտելիք։ Թէ մի հարուստ գիւղացիի տուն լինիս և քեզ ձէթով (կտաւատի իւղ) «փիլաւ» հանէ պահքի օր, մի մեծ պատիւ արած կը լինի. զի այդ կերակուր ալ չես գտներ Գաւաշի, Գաւառի և այլ խեղճ գիւղերն։ Դատուանի մէջ ցորենէ հաց չեն ուտեր, այլ հաճարէ (չավտար), զոր տեղացիները «տարեկան» կանուանեն զի, մայիսին կը ցանեն և մի տարի անցնելէ յետոյ յուլիս ամսոյ մէջ կը հնձեն։ Մի անվարժ մարդ այդ հացէն կերած ժամանակ՝ սաստիկ խիթ կունենայ փորին մէջ։ Գիտէ՞ք ի՞նչ է այդ տեղի սովորական կերակուր մեծ պահքի մէջ. տարեկան հացը սոխի հետ կուտեն, աղի մէջ թաթխելով զայն. ասի չունեցողներն ալ՝ «ցամաք հաց»։ Պատւոյ համար երբեմն մեզ կաղամբի թթուստ (լահանա թուրշուսի) կը բերէին։ Արդ, կը հարցնեմ ընթերցողին. այսպիսի սնունդով ապրող մարդիկ ի՞նչ աշխոյժ և եռանդ կրնան ունենալ...։ Թէ չօգնէին Հայաստանի շատ առողջարար օդն և հողագործական աշխատութիւններն, որովք դաշտի վրայ բաց տեղեր և ազատ օդի մէջ ժամանակ կանցունեն, անշուշտ տկար կազմուած պիտի ունենային։ Ես կը մտածեմ թէ գիւղացւոց համար մասնաւոր կանոններ պէտք է դնել պահեցողութեան մասին։ Ճշմարիտ ազգասէր եկեղեցականաց ուշադրութիւնն կը հրաւիրեմ այս կէտի վրայ։ Բայց ո՞վ պիտի մտածէ այսպիսի կէտերու վրայ. մեր եկեղեցականք (բացառութիւն կազմողներն թող իւրեանց վրայ չառնեն) կը մտածեն թէ ինչ միջոցներով կարելի է աւելի կողոպտել աղքատ և տգէտ գիւղացին։ Իմ Դատուան եղած ժամանակ՝ քուրդի նմանութիւն ունեցող մի Հայ որ Աղթամարի կաթողիկոսէն ալ կոնդակ ունէր իւր ձեռք, Ս. Գէորգի մասունքն էլ շատ գիւղեր պտտցունելէ յետոյ Դատուան ալ բերաւ, և այն խեղճ աղքատներ որք ուտելիք հաց և հագնելիք հագուստ չունին, իրարմէ 10-20 փարա մուրալով տուին Ս. Գէորգին (կամ աւելի ճիշդ՝ քրդանման անձին) և համարձակութիւն ունեցան նորա մասունքին առջև գետնամած և արտասուաթոր երկրպագութիւն անելով՝ գթութիւն խնդրել իւրեանց թշուառ վիճակի վրայ. կային ալ որ 2-3 ղրշ արժէք ունեցող «եազմա»ներ՝ զորս կարելի է տարին մի անգամ հագիւ դրած էին իւրեանց գլուխ և խնայելով գործածած, կը բերէին Ս. Գէորգին կը նուիրէին։ Այդ մասունք պտըտցնողներն՝ որոշեալ պայմանաժամով կը գնեն զայն Աղթամարի վանքէն 25-30 հազար ղրուշով (աճուրդի հանուելով մասունքն՝ աւելի տուողին կը յանձնուի) և այդչափ դրամ վճարելէ յետոյ՝ բաւական մեծ գումար ալ շահ կունենան, կողոպտելով գիւղացիներն, որք բառին բովանդակ նշանակութեամբ խեղճ և տգէտ են։

Դատուանի եկեղեցին շատ խեղճ շինուած է։ Աստուած մեղ չը համարի ասել, ախոռի պէս մթին մի տեղէ, ծակամուտ դուռով։ Անձրևի ժամանակ անձրևն կը հոսի եկեղեցիի մէջ, և գետինն որ բոլորովին հող է, կը թրջուի և այդ թրջուած հողի վրա երկրպագութիւն կանեն հարսեր և աղջիկներ, որոց քիթ և բերան կը տեսնես, եկեղեցիէն դուրս ելած ժամանակ, որ տղմաթաթախ եղած են։ Քուրդեր գողցած էին եկեղեցական զգեստներն 4 տարիի չափ յառաջ, աղքատ գիւղացիներն նորէն շինեցին և այդ նոր շինուածներ ևս անցած տարի պատերազմի խառնաշփոթ ժամանակի մէջ անկանոն (պաշըպօզուք) զօրքերէն կողոպտուեցան։ Այս օրեր գիւղացիներն դատ բացին 4 տարի առաջ կողոպտող Քիւրդերին դէմ և դատին մէջ գիւղացիներն շահելով, Քիւրդերն բանտարկվեցան այն պայմանով որ կամ զգեստները վերադարձնեն կամ նոցա արժէքը վճարեն։ Այս դատի մէջ Հայ գիւղացիներուն օգնեց և պաշտպանեց Վանայ նահանգապետի օգնական Վսեմ. Աղաթօնեան Մկրտիչ էֆէնտին։ Դատուանցիները Զատկին առանց պատարագի անմաս անհաղորդ պիտի մնային զի զգեստ չը կայ որ պատարագ անեն. քահանայն միշտ առանց փիլոնի է եկեղեցիի մէջ։ Շատ թախանձներով հազիւ յաջողեցան Խընձորգին գիւղէն մի ձեռք մաշած զգեստ բերել փոխառութեամբ և Ծաղկազարդի կիրակի օրն պատարագ մատուցանելով շուտ վերադարձնել որպէս զի խնձորգինցիներն ալ Աւագ հինգշաբթի օր պատարագ մատուցանեն։ Դատուանի քահանայն Հայ գիւղացիների խեղճութիւնները ինձ նկարագրած ժամանակ՝ պատմեց թէ մի գիւղի մէջ քահանայն թաղիքէ (չուլ, քէպէ) շուրջառ և սաղաւարտ կը գործածէ եղեր պատարագի ժամանակ. Մի քաղաքացի վարդապետ կը պատահի մի օր այդ գիւղի եկեղեցին պատարագի ժամանակ. պատարագիչ քահանայն իւր սարգաւագ տիրացուի միջոցաւ կը հարցնէ վարդապետին թէ սկիհն ալ Ս. հաղորդութեան հետ միատեղ ճաշակե՞մ։ Վարդապետը կը զարմանայ մտովի թէ ի՞նչպէս կարելի է ուտել արծաթէ սկիհն և կը պատասխանէ թէ՝ «օրհնած, ձեր սովորութիւնն ինչ որ է ամեն ժամանակ, այժմ ալ նոյնպէս արէք։» Յետոյ վարդապետը կիմանայ թէ խեղճ գիւղացիները մի արծաթէ սկիհ մը չունենալով, շողգամէ սկիհ կը շինեն եղեր պատարագի օրեր։

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Deutsche Zeitung» լրագրին Հռոմից հեռագրում են, որ Բ. Դուռը Վատիկանին յայտնեց, թէ որովհետև աւստրո-թիւրքական դաշնագրի մէջ սուլթանի բարձրագոյն իշխանութիւնը ճանաչված է Բօսնիայի վրա, հետևաբար սուլթանի կառավարութիւնը ստիպված է վճռապէս բողոքել Բօսնիայի և Հերցեգովինայի վերաբերութեամբ Վատիկանի և Աւստրիայի մէջ կայանալու որ և իցէ համաձայնութեան դէմ։ Բ. Դրան կարծիքով, Աւստրիան իրաւունք չունի վերոյիշեալ նահանգների եկեղեցական գործերը վարել, որովհետև դրանք կազմում են Թիւրքիայի անբաժան մասը. իսկ եթէ Վատիկանը հարկաւոր է համարում Բօսնիայի և Հերցեգովինայի կաթոլիկական եկեղեցու կազմակերպութեան մէջ որ և իցէ փոփոխութիւններ անել, ուրեմն այդպիսի փոփոխութիւնները կարող են լինել միայն սուլթանի, որպէս երկու նահանգների բարձրագոյն պետի, անմիջական համաձայնութեամբ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ. ***. Պատասխանը չենք տպի։ Ի՞նչ անենք ուղարկած 1 րուբլու հետ։

—ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Երկրագործ. Մատենագրութիւնը «Բրիչի» Փորձին տուած պատասխանի մասին չենք տպի։ Մի՞թէ չէիք ափսոսում ձեր ժամանակը, որ կարդում էիք այդ յիմարութիւնը և նրա մասին մատենագրութիւն գրում։

—ՉԱՐԷՔ. Ա. Վ. Տ. Ց. Մենք սովորութիւն չունենք թղթակիցների ազգանունները յայտնելու։ Լուրը ձեր մասին կազմված է խմբագրատանը մի քանի նամակներից, որոնց հեղինակների ազգանունները չենք յիշում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՕԴԷՍՍԱ, 27 մայիսի։ «Голосъ» լրագրին հեռագրում են, որ ամբողջ Օդէսսան մի առանձին շքեղութեամբ ուղեկցեց Միխայիլ Դիմիտրիեվիչ Սկոբոլեվ երկրորդին, որը «Ռուսիա» անուանված շոգենաւով ուղևորվում էր դէպի Բուրգաս։ Նաւահանգստի վրա հաւաքվել էին բոլոր օֆիցերները, նշանաւոր 30-րորդ դիվիզիայի բոլոր ստորաստիճան գէօրգիևսկի խաչաւորները, քաղաքապետը, հրամանատարը և քաղաքագլուխը. Սկոբոլեվ երկրորդը մնաս բարեաւ ասելով ստորաստիճան օֆիցերներին, դարձաւ դէպի նրանց մի թէև կարճ, բայց սրտառուչ և ջերմեռանդ ճառով, և յիշելով 30-րորդ դիվիզիայի քաջագործ ծառայութիւնը, յետոյ Սկոբոլեվ վերցրեց գլխարկը, խորը կերպով գլուխ տուեց իր քաջ ընկերակիցներին, և վերջացնելով իր ճառը ասաց, որ նրանք այժմ պէտք է շարունակեն իրանց հաւատարիմ ծառայութիւնը գիւղերում, ուր նրանք պարտական են կրթել նոր սերունդը քաջութեան, անվեհերութեան և Թագաւորին ու հայրենիքին հաւատարմութեան ոգով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ «Новое Время» լրագրին հաղորդում են, որ արևելեան երրորդ փոխառութեան ստորագրութիւնը 600 միլիօն ստորագրողներ տուեց, օբլիգացիաներ կարող են ստանալ միայն ստորագրողների կէսը։ Բարձրագոյն քրէական դատարանի վճիռը այսօր մայիսի 28-ին, առաւօտեան 10 ժամին, Սմօլէնսկի դաշտում կատարվեցաւ պետական յանցաւոր Սօլովիևվի վրա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր., երկրորդ 94 ր. 75 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 240 ր. 50 կ., երկրորդ 238 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 75 կ., երկրորդ 93 ր., ոսկի 8 ր. 46 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ $23^{25}/_{32}$ պէնս։ Տրամադրութիւնը առաջ ամուր էր յետոյ թուլացաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Նրանց Մեծութիւնները Թագաւորը և Թագուհին և Մեծ Իշխան Սէրգէյ Ալէքսանդրովիչ երէկ $6^1/_2$ ժամին երեկոյեան Լիվադիայից հասան Ցարսկոյէ-Սէլօ։ Ալէքսանդրա Իօսիֆօվնա Մեծ Իշխանուհին և Դիմիտրի Կօնստանտինօվիչ հասան Պավլօվսկ։ Զինուորական մինիստր Միլիւտին վերադարձաւ Ս. Պետերբուրգ։

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարուրայ Խանըխլար գիւղի սուրբ Սարգսեան ծխական դպրոցի վերատեսուչները, ամսոյս 5-ին գնալով առ կալուածատէր Երևանու բնակիչ պ. ՍՏԵՓԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻ իւրոյապատկան Միագուտ անուանված գիւղը, որ է մերձ Խանըխլար գեղջ, ներկայացնում են դպրոցի ժապաւինեալ տումարը յիշեալ պարոնին, և նա ամենայն սիրով հարիւր րուբլի ստորագրում է ու կանխիկ վճարում ի ձեռն հոգաբարձուաց պ. Այվազ Միսաքեանի և պ. Ստեփան Բարսեղեանի, որոյ հոգևոր օժանդակութեան մեծ շնորհակալութիւն մատուցանի ի դիմաց հասարակութեան։

Մահտեսի Թումէն Աջէմեան

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ պատիւ ունի յայտնել ընկերութեան պ. պ. անդամներին, որ ընկերութեան **ԲՆԱԿԱՐԱՆԸ** արդէն վարձված է Չիթախովի տանը, Գօլովինսկի պրօսպէկտի վրա և խնդրում է անդամական **ՏՈՒՐՔԸ** չը վճարող պարոններին, նոյնպէս ընկերութեան անդամ գրվել ու, փող վճարելու և տոմսակ ստանալու համար ցանկացողներին դիմել ընկերութեան ստարշինա **Գ. ՄԵՀՐԱԲՕՎԻՆ**, Գօլովինսկի պրօսպէկտի վրա, Շիօեվի տանը, խանութ № 5։

Дозволено Цензурою 29 Мая 1879 г. Тифлисъ
Տպարան Ա. Ա. Միխելսոնի
Типографія А. А. Михельсона